

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ .....	5
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	7
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ .....	10
5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ .....	11
6. ԱՄՓՈՓՈՒՄ .....	12



## 1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2020-ի երրորդ եռամսյակում տնտեսական ակտիվությունը ՀՀ-ում շարունակել է կրճատվել՝ նույնիսկ կարանտինային սահմանափակումների բացակայության պայմաններում: Տնտեսության արագ (V-աձև) վերականգնման մասին կանխատեսումները իրականություն չդարձան, ինչը վկայում է տնտեսական զարգացումների տեմպի խաթարման մասին: Այլ կերպ ասած՝ կարանտինային սահմանափակումների բացասական էֆեկտը ստացել է լազային բնույթ և տեղափոխվել հետագա ամիսներ: Հիմնական պատճառն այն է, որ կառավարությունը, ըստ էության, ձախողել է արդյունավետ հակաճգնաժամային միջոցառումների մշակման և իրականացման հարցում:

Նկատենք, որ սույն թվականի սեպտեմբերի 27-ից բացասական տնտեսական զարգացումներին գումարվել է Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը: Միաժամանակ ակնհայտ է, որ ռազմական գործողությունների տնտեսական հետևանքները կդրսևորվեն՝ սկսած հոկտեմբեր ամսից:

2020 թվականի երրորդ եռամսյակում արձանագրվել է 9.1% **տնտեսական անկում**<sup>1</sup> նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 8.4% տնտեսական աճի դիմաց: Արդյունքում հունվար-սեպտեմբեր ամիսների տնտեսական անկումը (իրական արտահայտությամբ) կազմել է 7.1%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7.6% աճի դիմաց: Անկման 3.0 տոկոսային կետը պայմանավորված է ծառայությունների, 1.1 տոկոսային կետը՝ առևտրի, 1.1 տոկոսային կետը՝ շինարարության, 0.3 տոկոսային կետը՝ արդյունաբերության, 0.1 տոկոսային կետը՝ գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտով<sup>2</sup>: Բացարձակ մեծությունների կտրվածքով՝ 2020 թվականի առաջին ինն ամիսների *անվանական* ՀՆԱ-ն գնահատվել է 4,283.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4,570.3 մլրդ դրամի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում **տնտեսական ակտիվության մակարդակը** կրճատվել է 6.6%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 7.1% աճի<sup>2</sup> դիմաց: Տնտեսական ակտիվության անկմանը նպաստել են առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար -4.3, -2.8 և -0.8 տոկոսային կետով: Միաժամանակ, անկմանը հակազդել են

<sup>1</sup> Տնտեսական աճի ցուցանիշը՝ -7.1%-ը, ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև ֆինանսական միջնորդության անուղղակի չափվող ծառայությունների (ՖՄԱԶԾ) նպաստումը՝ -0.3 տոկոսային կետ, ինչպես նաև զուտ անուղղակի հարկերի նպաստումը՝ -1.2 տոկոսային կետ: Այսպիսով,  $-7.1 = -3.0 - 1.1 - 1.1 - 0.3 - 0.1 - 0.3 - 1.2$ :

<sup>2</sup> Ի տարբերություն տնտեսական աճի՝ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) ներկայացնում է համախառն թողարկման, այլ ոչ թե համախառն ավելացված արժեքի աճը տվյալ ժամանակահատվածում:

արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտները, որոնք ձևավորել են համապատասխանաբար 0.2 և 0.1 տոկոսային կետ դրական նպաստումներ<sup>3</sup>:

Անդրադառնանք տնտեսության առանձին ճյուղերի և ենթաճյուղերի դինամիկային: **Արդյունաբերության թողարկումը** 2020-ի առաջին ինն ամիսների արդյունքներով աճել է միայն 1.0%-ով՝ նախորդ տարվա 9.6% աճի դիմաց<sup>4</sup>: Արդյունաբերության աճը մեծ մասամբ պայմանավորված է հանքարդյունաբերության ենթաճյուղով, որի 16.7% աճը ձևավորել է 3.0 տոկոսային կետ դրական նպաստում (հանքարդյունաբերության շարժիչ ուժը շարունակում է մնալ մետաղական հանքաքարի արդյունահանումը, որը գրանցել է 16.7% աճ): Արդյունաբերության մյուս ենթաճյուղը, որը ձևավորել է դրական նպաստում՝ 0.1 տոկոսային կետով, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումն է՝ 0.4% աճով: Միաժամանակ, մշակող արդյունաբերությունում կրկին արձանագրվել է անկում՝ այս անգամ 2.7%-ով, որը հակազդել է ընդհանուր ոլորտի աճին -1.8 տոկոսային կետով: Բացի այդ, արդյունաբերության աճին հակազդել է նաև «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը՝ կրճատվելով 16.2%-ով և ձևավորելով -0.2 տոկոսային կետ բացասական նպաստում:

2020-ի առաջին ինն ամիսներին **գյուղատնտեսության և ձկնորսության** ընդհանուր **թողարկումը** աճել է 0.6%-ով՝ նախորդ տարվա 4.3% անկման դիմաց<sup>5</sup>: Ընդ որում, անասնաբուծության ենթաճյուղը աճել է 1.6%-ով՝ հանգեցնելով 0.7 տոկոսային կետ դրական նպաստման: Բուսաբուծության ենթաճյուղը կրճատվել 0.4%-ով՝ հակազդելով ընդհանուր ոլորտի աճին 0.2 տոկոսային կետով: Ինչ վերաբերում է ձկնորսությանը, ապա այն աճել է 3.0%-ով՝ նպաստելով ընդհանուր ոլորտի աճին 0.1 տոկոսային կետով:

Մնացած երեք ոլորտներում (շինարարություն, ծառայություններ, առևտուր) 2020-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցվել է երկնիշ անկում: Այսպես, **շինարարությունը** հաշվետու ժամանակահատվածում կրճատվել է 15.7%-ով՝ նախորդ տարվա 4.4% աճի դիմաց: Ընդ որում, բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալները նվազել են 35.2%-ով՝ ձևավորելով բացասական նպաստում՝ -17.0 տոկոսային կետով: Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարությունը ևս ընդհանուր ոլորտի աճին նպաստել է

<sup>3</sup> ՏԱՅ-ի արժեքը՝ -6.6%-ը, ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել այլ գործոնների դրական նպաստումը՝ 1.0 տոկոսային կետով: Այսպիսով,  $-6.6 = -4.3 - 2.8 - 0.8 + 0.2 + 0.1 + 1.0$ :

<sup>4</sup> Նկատենք, որ արդյունաբերությունում ստեղծված *համախառն ավելացված արժեքը*, ի տարբերություն *համախառն թողարկման*, արձանագրել է անկում:

<sup>5</sup> Նկատենք, որ գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտում ստեղծված *համախառն ավելացված արժեքը*, ի տարբերություն *համախառն թողարկման*, արձանագրել է անկում:

բացասաբար. նրա նվազումը՝ 1.3%-ով, հանգեցրել է -0.6 տոկոսային կետ նպաստման: Ինչ վերաբերում է կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարությանը, ապա այն 3.4 տոկոսային կետով հակազդել է ընդհանուր ոլորտի անկմանը՝ գրանցելով 4.4% աճ<sup>6</sup>:

Հաշվետու ժամանակահատվածում **ծառայությունների** թողարկումը նվազել է 11.7%-ով՝ նախորդ տարվա 15.5% աճի դիմաց: Անկման 4.6 տոկոսային կետը պայմանավորված է կացության և հանրային սննդի կազմակերպման ենթաճյուղի 48.1% կրճատմամբ, 3.9 տոկոսային կետը՝ տրանսպորտի ենթաճյուղի 32.6% կրճատմամբ, 2.1 տոկոսային կետը՝ մշակույթի, զվարճությունների և հանգստի ենթաճյուղի 9.0% կրճատմամբ, իսկ 1.8 տոկոսային կետը՝ վարչարարական և օժանդակ գործունեության ենթաճյուղի 41.3% կրճատմամբ: Ծառայությունների նվազմանը հակազդել են ֆինանսական և ապահովագրական գործունեության ենթաճյուղը՝ 1.6 տոկոսային կետով (աճը՝ 7.4%), ինչպես նաև տեղեկատվության և կապի ենթաճյուղը՝ 1.0 տոկոսային կետով (աճը՝ 7.6%)<sup>7</sup>:

2020-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին **առևտրի** շրջանառությունը նվազել է 11.4%-ով՝ նախորդ տարվա 8.8% աճի դիմաց: Անկմանը հիմնականում նպաստել են մանրածախ և մեծածախ առևտուրը՝ համապատասխանաբար 7.1 և 3.5 տոկոսային կետերով (նվազումները՝ 15.0% և 7.1%): Առևտրի շրջանառության անկման մնացած մասը պայմանավորված է ավտոմեքենաների առևտրի 22.6% նվազմամբ<sup>8</sup>:

Տնտեսական ակտիվության նվազումը պայմանավորված է ոչ միայն առաջարկի, այլև **պահանջարկի** բաղադրիչների թուլացմամբ: Այսպես, 2020-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին վերջնական սպառումը նվազել է 6.2%-ով: Ընդ որում, մասնավոր սպառումը նվազել է 8.7%-ով, իսկ պետական սպառումը խթանող հարկաբյուջետային քաղաքականության հետևանքով աճել է 11.4%-ով: Մյուս

<sup>6</sup> Շինարարության ոլորտի նվազման տեմպը ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև մարդասիրական օգնության և համայնքների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների նվազումը 70.5%-ով և 13.4%-ով, որոնք ձևավորել են բացասական նպաստումներ՝ -1.1 և -0.3 տոկոսային կետով: Այսպիսով,  $-15.7 \approx -17.0 - 0.6 + 3.4 - 1.1 - 0.3$ :

<sup>7</sup> Ծառայությունների ոլորտի նվազման տեմպը ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետևյալ նպաստումները. կրթություն՝ -0.3 տոկոսային կետ (նվազումը՝ 11.5%), առողջապահություն՝ -0.2 տոկոսային կետ (նվազումը՝ 4.6%), անշարժ գույք՝ -0.4 տոկոսային կետ (նվազումը՝ 11.9%), մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն՝ -0.3 տոկոսային կետ (նվազումը՝ 8.0%), սպասարկման այլ ծառայություններ՝ -0.7 տոկոսային կետ (նվազումը՝ 46.1%): Այսպիսով,  $-11.7 = -4.6 - 3.9 - 2.1 - 1.8 + 1.6 + 1.0 - 0.3 - 0.2 - 0.4 - 0.3 - 0.7$ :

<sup>8</sup> Սույն ցուցանիշը ներառում է ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների՝ միայն մասնագիտացված խանութների միջոցով իրականացված վաճառքը, ինչպես նաև տեխնիկական սպասարկումը և նորոգումը:

կողմից, կապիտալ ներդրումները նվազել են 14.2%-ով՝ հիմնականում պայմանավորված շինարարության ծավալների զգալի անկմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է և՛ **արտահանման**, և՛ **ներմուծման** անկում. արտահանումը դրամային արտահայտությամբ նվազել է 30.5%-ով, իսկ ներմուծումը՝ 27.7%-ով<sup>9</sup>: Արտաքին ապրանքաշրջանառության ծավալների նվազումը պայմանավորված է համավարակի բացասական դրսևորումներով, երբ մի կողմից նվազել է բնակչության գնողունակությունը, մյուս կողմից՝ արտաքին պահանջարկը տեղական արտադրանքի նկատմամբ:

2020 թվականի սեպտեմբերին ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է ցածր գնաճային միջավայր. միջին **գնաճը** կազմել է 0.9%, իսկ 12-ամսյա գնաճը՝ 1.4%: Հաշվի առնելով էական գնաճային ռիսկերի բացակայությունը՝ ՀՀ ԿԲ-ն 2020 թվականի երրորդ եռամսյակում իրականացրել է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ սեպտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցնելով 0.25 տոկոսային կետով և սահմանելով 4.25%: Նշենք նաև, որ տարեսկզբի համեմատ վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցվել է 1.25 տոկոսային կետով:

2020 թվականի հունվար-սեպտեմբերին միջին ամսական անվանական **աշխատավարձն** աճել է 4.7%-ով՝ կազմելով 186,967 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 7.4%-ով՝ կազմելով 166,361 դրամ, իսկ ոչ պետականում՝ 3.2%-ով՝ կազմելով 196,815 դրամ: Իրական աշխատավարձը նույն ժամանակահատվածում 0.9% գնաճի պայմաններում աճել է 3.8%-ով:

**Հարկաբյուջետային ազդակի** մասով նշենք, որ 2020 թվականի առաջին ինն ամիսներին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է 3.9 ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների չեզոք (-0.3) և ծախսերի ընդլայնող (4.2) ազդեցություններով: Համավարակի բացասական հետևանքների չեզոքացմանն ուղղված և զուտ վարկավորման միջոցով կատարված ծախսերը հաշվի առնելու պարագայում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատվում է 4.4 ընդլայնող:

<sup>9</sup> Արտահանման և ներմուծման տվյալները դուրս են բերվել 2020 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված հետևյալ փաստաթղթից. «2020 թվականի առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների ՀՆԱ-ի նախնական տվյալները»: Առկա են վերանայումներ՝ «Lnyu» հիմնադրամի «ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2020 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին» աշխատանքի համեմատ:

## 2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2020 թվականի առաջին ինն ամիսների արդյունքներով պետական բյուջեում փաստացի հավաքագրվել է 1,075.1 մլրդ դրամ ընդհանուր եկամուտ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1,148.1 մլրդ դրամի դիմաց: Սա նշանակում է, որ 2020-ի կատարողականը ցածր է 2019-ի ցուցանիշից 73.0 մլրդ դրամով կամ 6.4%-ով: Ընդհանուր եկամուտների նվազման 5.4 տոկոսային կետը պայմանավորված է հարկային եկամուտների և պետական տուրքերի 5.8% անկմամբ՝ 1,079.1 մլրդ-ից 1,016.8 մլրդ դրամ: Մնացած 1.0 տոկոսային կետը բաժին է ընկնում պաշտոնական դրամաշնորհներին և այլ եկամուտներին, որոնք կրճատվել են համապատասխանաբար 50.4%-ով (9.3 մլրդ-ից 4.6 մլրդ դրամ) և 10.0%-ով (59.7 մլրդ-ից 53.7 մլրդ դրամ):

Հարկ է նկատել, որ եթե բյուջետային եկամուտների՝ առաջին կիսամյակի անկումը մեծ մասամբ պայմանավորված էր կարանտինային սահմանափակումներով, ապա առաջին ինն ամիսների բացասական դինամիկան վկայում է հետևյալի մասին. կառավարության ֆիսկալ փաթեթը համարժեք չէր ճգնաժամի խորությանը, որի հետևանքով կորոնավիրուսային շոկը ստացել է երկարատև դրսևորումներ:

Բյուջետային եկամուտների՝ 2020-ի առաջին ինն ամիսների փաստացի կատարողականը որոշակիորեն շեղվել է պլանային ցուցանիշներից (Աղյուսակ 1): Այսպես, ընդհանուր եկամուտների փաստացի հավաքագրումը (1,075.1 մլրդ դրամ) կազմել է ճշտված պլանի (1,088.0 մլրդ դրամ) 98.8%-ը: Միաժամանակ, հարկային եկամուտների և պետական տուրքերի ճշտված պլանը (1,010.8 մլրդ դրամ) կատարվել է 100.6%-ով (1,016.8 մլրդ դրամ): Այս գերակատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ բյուջետային պլանավորման գործընթացում առաջին ինն ամիսների պլանը ճշգրտվել է նվազման ուղղությամբ: Մյուս կողմից, պաշտոնական դրամաշնորհների գծով ապահովվել է ճշտված պլանի (21.0 մլրդ դրամ) իրագործում 22.0%-ով (4.6 մլրդ դրամ), իսկ այլ եկամուտների գծով՝ 95.6%-ով (53.7 մլրդ դրամ՝ 56.2 մլրդ դրամի դիմաց):

**Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները  
2020թ. առաջին ինն ամիսներին, մլրդ դրամ**

	Առաջին ինն ամիսներ, պլան	Առաջին ինն ամիսներ, ճշտված պլան	Առաջին ինն ամիսներ, փաստացի	Կատարման %-ն առաջին ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
<b>ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>	1,218.7	1,088.0	1,075.1	98.8%
այդ թվում՝				
<b>Հարկային եկամուտներ և պետական տուրքեր</b>	1,160.1	1,010.8	1,016.8	100.6%
<b>Պաշտոնական դրամաշնորհներ</b>	19.8	21.0	4.6	22.0%
<b>Այլ եկամուտներ</b>	38.9	56.2	53.7	95.6%

2020-ի առաջին ինն ամիսներին *հարկային եկամուտների և պետական տուրքերի* 33.0%-ը ապահովվել է ավելացված արժեքի հարկի, 30.5%-ը՝ եկամտային հարկի, 12.1%-ը՝ շահութահարկի, 8.2%-ը՝ ակցիզային հարկի, 4.6%-ը՝ մաքսատուրքերի, 4.0%-ը՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի, 1.9%-ը՝ շրջանառության հարկի, 1.7%-ը՝ սոցիալական վճարների, իսկ մնացած մասը՝ այլ հարկերի և պետական տուրքերի հաշվին:

*Պաշտոնական դրամաշնորհների* թերակատարումը հիմնականում պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով: Մասնավորապես, չեն ստացվել 5 ծրագրերի շրջանակներում նախատեսված 3.4 մլրդ դրամ դրամաշնորհները, իսկ 13 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 18%-ով, որոնք կազմել են 3.1 մլրդ դրամ: Բացի այդ, Եվրամիության կողմից բյուջետային աջակցության ծրագրերի շրջանակներում 2020 թվականին հատկացվելիք միջոցները՝ 9.6 մլրդ դրամի չափով, նախատեսվել է ստանալ չորրորդ եռամսյակում:

*Այլ եկամուտների* մասով նշենք, որ որոշակիորեն նվազել են ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված մուտքերը: Միաժամանակ, զգալիորեն աճել են բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարները (13.1 մլրդ դրամ, ինչը 123.7%-ով գերազանցում է ինն ամիսների համար ծրագրված մուտքերը և 51.7%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը), ինչպես նաև պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց ստացված տոկոսավճարները (10.8 մլրդ դրամ, ինչը 44.2%-ով գերազանցում է ինն ամիսների համար ծրագրված մուտքերը և 60.1%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը):



Վերոհիշյալ տեղաշարժերի արդյունքում պետական բյուջեի եկամուտներում հարկերի և պետական տուրքերի տեսակարար կշիռը 2019 թվականի առաջին ինն ամիսների համեմատ աճել է 0.6 տոկոսային կետով ու կազմել 94.6%: Միաժամանակ, պաշտոնական դրամաշնորհների ու այլ եկամուտների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 0.4 և 0.2 տոկոսային կետերով և կազմել 0.4% և 5.0%:

### 3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2020 թվականի առաջին ինն ամիսներին պետական բյուջեի փաստացի ընդհանուր ծախսերը կազմել են 1,229.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1,053.0 մլրդ դրամի դիմաց<sup>10</sup>: Ծախսերի 16.8% աճի 13.9 տոկոսային կետը բխում է ընթացիկ ծախսերի 15.0% աճից՝ 981.4 մլրդ-ից 1,128.2 մլրդ դրամ: Ինչ վերաբերում է կապիտալ ծախսերին, ապա դրանք ավելացել են 42.1%-ով՝ 71.6 մլրդ դրամից 101.7 մլրդ, և նպաստել ընդհանուր ծախսերի աճին 2.9 տոկոսային կետով: Հաշվետու ժամանակահատվածում բյուջետային ծախսերի աճը հիմնականում կապված է համավարակի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների հետ, որոնց շրջանակներում ծախսվել է 54.2 մլրդ դրամ:

Համեմատելով փաստացի և պլանային ցուցանիշները (Աղյուսակ 2)՝ պարզ է դառնում, որ բյուջետային ծախսերի իրականացման մակարդակը շարունակում է մնալ խնդրահարույց: Մասնավորապես, ընդհանուր ծախսերը կատարվել են միայն 84.4%-ով՝ կազմելով 1,229.9 մլրդ դրամ՝ 1,457.3 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց: Ընդ որում, ընթացիկ ծախսերի պարագայում իրականացվել է ճշտված պլանի՝ 1,238.7 մլրդ դրամի 91.1%-ը՝ 1,128.2 մլրդ դրամ: Իրավիճակը առավել մտահոգիչ է կապիտալ ծախսերի առումով. 218.6 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց կատարվել է 101.7 մլրդ դրամ կապիտալ ծախս՝ ապահովելով ծրագրի իրականացում միայն 46.5%-ով: Այսպիսով, ծրագրային և փաստացի ցուցանիշների տարբերության 48.6%-ը բաժին է ընկել ընթացիկ, իսկ 51.4%-ը՝ կապիտալ ծախսերին:

<sup>10</sup> Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 2020 թվականին պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվները հիմնականում փակվել են, և նախկինում նշված հաշիվներով իրականացվող շրջանառությունը տեղափոխվել է պետական բյուջեի համապատասխան հաշիվներ: Այս փոփոխությունը միտված է բարձրացնելու պետական ֆինանսների թափանցիկության աստիճանը:

**Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերը (տնտեսագիտական դասակարգմամբ) 2020թ. առաջին ինն ամիսներին, մլրդ դրամ**

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Առաջին ինն ամիսներ, պլան	Առաջին ինն ամիսներ, ճշտված պլան	Առաջին ինն ամիսներ, փաստացի	Կատարման %-ն առաջին ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	1,371.8	1,457.3	1,229.9	84.4%
այդ թվում՝				
<b>ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ</b>	1,157.2	1,238.7	1,128.2	91.1%
այդ թվում՝				
<b>ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ</b>	126.6	126.5	120.9	95.6%
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ</b>	147.7	141.5	113.0	79.9%
<b>ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ</b>	120.5	120.6	117.7	97.6%
<b>ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ</b>	90.7	96.5	86.3	89.5%
<b>ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ</b>	118.2	145.9	121.5	83.3%
<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ</b>	384.8	420.7	403.9	96.0%
<b>ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	168.7	187.1	164.7	88.1%
<b>ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ (ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)</b>	214.6	218.6	101.7	46.5%
այդ թվում՝				
<b>ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ</b>	214.6	218.6	103.0	47.1%
այդ թվում՝				
<b>ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	214.6	218.6	103.0	47.1%
այդ թվում՝				
<b>ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	171.4	183.7	88.1	48.0%
<b>ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ</b>	40.4	31.6	14.1	44.7%
<b>ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	2.9	3.3	0.8	25.0%
<b>ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ</b>	0.0	0.0	-1.3	-

Ընթացիկ ծախսերի բաղադրիչների (Աղյուսակ 2) մասով առանձնացնենք հետևյալ դիտարկումները.

- Հաշվետու ժամանակահատվածում 120.9 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների *աշխատանքի վարձատրությանը*, որը կազմել է իննամսյա ծրագրի 95.6%-ը և 3.4%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը:

- *Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման* նպատակով 2020 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում օգտագործվել է իննամսյա ծրագրով նախատեսված միջոցների 79.9%-ը՝ 113.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չի կրել:
- *Կառավարության պարտքի սպասարկմանը* հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 117.7 մլրդ դրամ, ինչը կազմում է իննամսյա ծրագրի 97.6%-ը: Չնայած նրան, որ 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ պարտքի ծավալը նախորդ տարվա նույն ամսաթվի նկատմամբ աճել է 15.5%-ով, պարտքի սպասարկման ծախսերը մնացել են գրեթե անփոփոխ<sup>11</sup>:
- 2020 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 86.3 մլրդ դրամ *սուբսիդիաներ*, որոնք կազմում են իննամսյա ծրագրային ցուցանիշի 89.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուբսիդիաների գծով ծախսերն աճել են 13.4%-ով՝ հիմնականում պայմանավորված 2020 թվականի հունվարի 1-ից ուսուցիչների աշխատավարձերի 10% աճով:
- Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 121.5 մլրդ դրամ *դրամաշնորհներ*, որոնցից 118.8 մլրդ դրամը՝ պետական հատվածի այլ մակարդակներին, 2.7 մլրդ դրամը՝ միջազգային կազմակերպություններին: Ճշտված ծրագրի նկատմամբ դրամաշնորհների կատարողականը կազմել է 83.3%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրամաշնորհները աճել են 30.8%-ով:
- 2020 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 35.8%-ը՝ ավելի քան 403.9 մլրդ դրամ, ուղղվել է *սոցիալական նպաստների և կենսաթոշակների* վճարմանը: Ճշտված պլանի նկատմամբ արձանագրվել է 96.0% կատարողական: Նախորդ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով ծախսերն աճել են 21.4%-ով: Հարկ է նշել, որ աշխատանքային կենսաթոշակների գծով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակի միջին ամսական չափի 10% աճով:
- Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 164.7 մլրդ դրամ տրամադրվել է *այլ ծախսերին*՝ կազմելով իննամսյա ծրագրի 88.1%-ը և 24.8%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Կապիտալ ծախսերի բաղադրիչների մասով նկատենք, որ.

<sup>11</sup> Սա պայմանավորված է կառավարության պարտքի և դրա հիմնական բաղադրիչների կառուցվածքի փոփոխությամբ, միջին կշռված անվանական տոկոսադրույքի նվազմամբ, ինչպես նաև արտարժույթային վճարումների փոխարկումների համար կիրառվող դոլար-դրամ փոխարժեքի փոփոխությամբ:

- 2020 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին *ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը* կազմել են 103.0 մլրդ դրամ, և իննամսյա ծրագիրը կատարվել է 47.1%-ով: Թերակատարումը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում օգտագործվել է ինն ամիսների համար ծրագրված միջոցների 26.6%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 42.9%-ով:
- *Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից* հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել 1.3 մլրդ դրամ՝ ինն ամիսների ծրագրով նախատեսված 20.8 մլն դրամի և 2019 թվականի նույն ժամանակահատվածում ստացված 432.8 մլն դրամի դիմաց:

Ինչ վերաբերում է պետական բյուջեի ծախսերի կառուցվածքին, ապա 2020-ի առաջին ինն ամիսներին որոշակիորեն բարելավվել է կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում՝ հասնելով 8.3%-ի: Այդուհանդերձ, պահպանվում է կապիտալ ծախսերի ծրագրային և փաստացի ցուցանիշների շոշափելի «ճեղքվածքը», ինչը խարխիլում է երկարատև, կայուն տնտեսական աճի հիմքերը:

#### 4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ

2020 թվականի առաջին ինն ամիսների արդյունքներով՝ պետական բյուջեի դեֆիցիտը ՀՀ-ում կազմել է 154.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 95.1 մլրդ դրամ հավելուրդի և ծրագրված 369.3 մլրդ դրամ պակասուրդի դիմաց:

**Աղյուսակ 3. Պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները  
2020թ. առաջին ինն ամիսներին, մլրդ դրամ**

	Առաջին ինն ամիսներ, պլան	Առաջին ինն ամիսներ, ճշտված պլան	Առաջին ինն ամիսներ, փաստացի	Կատարման %-ն առաջին ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
<b>ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>	1,218.7	1,088.0	1,075.1	98.8%
<b>ԾԱԽՍԵՐ</b>	1,371.8	1,457.3	1,229.9	84.4%
<b>ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)</b>	153.1	369.3	154.8	41.9%

Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված եռամսյակային համամասնություններով՝ 2020 թվականի առաջին ինն ամիսների համար ի սկզբանե նախատեսվել էր բյուջետային պակասուրդ՝ 153.1 մլրդ դրամի չափով: Վերջինս, սակայն, հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ավելացվել է շուրջ 216.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված համավարակի հետևանքները

մեղմելու անհրաժեշտությամբ: Ծրագրվածից ցածր բյուջետային պակասուրդը հետևանք է ծախսերի համեմատ եկամուտների առավել բարձր կատարողականի:

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են 173.6 մլրդ դրամ, արտաքին աղբյուրները՝ -18.8 մլրդ դրամ՝ ինն ամիսների համար ծրագրված համապատասխանաբար 313.6 մլրդ դրամի և 55.7 մլրդ դրամի դիմաց:

## 5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ պետական պարտքը 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 7,854.6 մլն դոլար՝ 11.4%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ 7,050.1 մլն դոլարը: Ընդ որում, հաշվետու ժամանակահատվածում կառավարության պարտքը աճել է 12.8%-ով՝ 6,538.0 մլն-ից 7,374.5 մլն դոլար՝ 11.9 տոկոսային կետով նպաստելով ընդհանուր պարտքի աճին: Իսկ կենտրոնական բանկի պարտքը 0.5 տոկոսային կետով հակազդել է պետական պարտքի աճին՝ նվազելով 6.3%-ով՝ 512.1 մլն-ից 480.1 մլն դոլար (Աղյուսակ 4):

**Աղյուսակ 4. Պետական պարտքը 2020թ. և 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ, մլն ԱՄՆ դոլար**

	30.09.2019թ.	30.09.2020թ.	Աճի տեմպը
<b>ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ</b>	7,050.1	7,854.6	111.4%
այդ թվում			
<b>ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔ</b>	6,538.0	7,374.5	112.8%
<b>ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՊԱՐՏՔ</b>	512.1	480.1	93.7%

Պետական պարտքի կառուցվածքի մասով հարկ է նկատել, որ 2020 թվականի առաջին ինն ամիսների արդյունքներով՝ կառավարության պարտքի մասնաբաժինը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացել է 1.2 տոկոսային կետով և կազմել 93.9%, որի ներքո նվազել է կենտրոնական բանկի պարտքի մասնաբաժինը՝ հասնելով 6.1%-ի:

Նշենք նաև, որ 2020-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում գնահատվում է 62.1%<sup>12</sup>: Հետևաբար, նկատի ունենալով պետական պարտքի՝ փոքր բաց տնտեսությունների համար

<sup>12</sup> Հաշվարկում օգտագործվել է ՀՆԱ-ի՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում (ընդունվել է 2020 թվականի հոկտեմբերի 7-ին) ներկայացված կանխատեսումը՝ 2020-ի համար: Փոփոխությունների իրականացումը թելադրված էր սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրությամբ:



առաջարկվող սահմանափակումը ՀՆԱ-ի 60%-ի չափով՝ կառավարությունը պետք է ձեռնարկի միջոցառումներ միջնաժամկետ հեռանկարում հանրային ֆինանսների կայունությունը երաշխավորելու համար:

## 6. ԱՄՓՈՓՈՒՄ

2020 թվականի առաջին ինն ամիսների ցուցանիշները վկայում են, որ մարտի կեսերից մինչև մայիսի կեսերը կիրառված կարանտինային սահմանափակումների բացասական էֆեկտը տեղափոխվել է նաև երրորդ եռամսյակ: Այն, որ առաջին կիսամյակի տնտեսական զարգացումները կլինեն անկումային, թերևս կանխատեսելի էր տնտեսական գործունեության մի շարք տեսակների կասեցման պայմաններում: Միաժամանակ, ակնկալում էր նաև, որ կառավարությունը իր հակաճգնաժամային միջոցառումներով կփոխհատուցի իրացվելիության՝ կարանտինային սահմանափակումներով պայմանավորված դեֆիցիտը: Սակայն կառավարությանը չհաջողվեց ձևավորել թիրախային և արդյունավետ ֆիսկալ փաթեթ, որի հետևանքով տնտեսության ներուժային կարողությունների կորուստը դարձավ անխուսափելի:

2020 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է տնտեսական անկում՝ 7.1%-ով: Մյուս կողմից, տնտեսական ակտիվության մակարդակը ՀՀ-ում կրճատվել է 6.6%-ով: Ընդ որում, երեք ոլորտներում՝ շինարարություն, ծառայություններ և առևտուր, արձանագրվել է թողարկման ծավալների երկնիշ անկում՝ համապատասխանաբար 15.7%-ով, 11.7%-ով և 11.4%-ով: Արդյունաբերության ոլորտում գրանցվել է թողարկման 1.0% աճ, սակայն այդ աճի որակը շարունակել է մնալ մտահոգիչ: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում նույնպես արդյունաբերական արտադրանքի աճը պայմանավորված է եղել հիմնականում հանքարդյունաբերության ենթաճյուղով, այն դեպքում, երբ մշակող արդյունաբերությունը շարունակել է կրճատվել: Չնչին՝ 0.6%, աճ է գրանցվել նաև գյուղատնտեսության և ձկնորսության ոլորտի թողարկման ծավալներում:

Հաշվետու ժամանակահատվածում տնտեսական զարգացումները բնորոշվել են ոչ միայն առաջարկի, այլև պահանջարկի բաղադրիչների թուլացմամբ: Այսպես, 2020-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին վերջնական սպառումը նվազել է 6.2%-ով, իսկ կապիտալ ներդրումները՝ 14.2%-ով: Բացի այդ, արձանագրվել է և՛ արտահանման, և՛ ներմուծման անկում. արտահանումը դրամային արտահայտությամբ նվազել է 30.5%-ով, իսկ ներմուծումը՝ 27.7%-ով:

Բյուջետային եկամուտների հավաքագրման առումով, ընդհանուր առմամբ, ցուցաբերվել է բավարար կատարողական՝ առաջին ինն ամիսների ճշտված պլանի

նկատմամբ: Մասնավորապես, գերակատարվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի ճշտված պլանը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ բյուջետային պլանավորման գործընթացում առաջին ինն ամիսների պլանը ճշգրտվել է նվազման ուղղությամբ: Մյուս կողմից, պաշտոնական դրամաշնորհների գծով ապահովվել է ճշտված պլանի իրագործում միայն 22.0%-ով՝ կապված այն հանգամանքի հետ, որ նպատակային ծրագրերը իրականացվել են ոչ բավարար արագությամբ և որակով:

Բյուջետային ծախսերի կատարողականը շարունակել է էապես շեղվել ծրագրային ցուցանիշներից: Այսպես, ընթացիկ ծախսերը կատարվել են 91.1%-ով, իսկ կապիտալ ծախսերը՝ 46.5%-ով: Կապիտալ ծախսերի թերակատարումը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում օգտագործվել է ինն ամիսների համար ծրագրված միջոցների միայն 26.6%-ը: Ընթացիկ ծախսերը կարևոր են պահանջարկը խթանելու և տվյալ ժամանակահատվածի տնտեսական ակտիվությունը պահպանելու համար: Սակայն երկարատև, կայուն տնտեսական աճի գեներացման և երկարաժամկետ աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից առաջնային նշանակություն ունեն կապիտալ ծախսերը և պետական ներդրումները: Ուստի, ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակում բեկում առաջացնելու համար կառավարությունը պետք է ակտիվացնի կապիտալ ծախսերի գործիքը՝ առնվազն ապահովելով ծրագրային ցուցանիշների պատշաճ իրագործում:

Այսպիսով, կառավարության՝ առաջիկա ժամանակահատվածի հիմնական մարտահրավերը կայանում է հետևյալում. խրախուսել տնտեսական ակտիվությունը՝ միաժամանակ պահպանելով ֆիսկալ հատվածի կայունությունը: Այս խնդիրը հնարավոր է իրագործել տնտեսական աճի ներուժի բարձրացման միջոցով, որի ներքո կստեղծվեն պայմաններ տնտեսության արագ վերականգնման և պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության կայունացման համար:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: